№ V—VI **ՅՈՒՇԻԿ** 1887

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՇԷՓՍՊԻՐ

ԵՒ ԻԻՐ

ՀԱՄԼԷԹ ՈՂԲԵՐԴՈՒԹԵԱՆ-ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՓՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԵՂԽՍՏՍՊԻՐԵՑ

ՊԵՏՐՈՍ Հ. ԱՊԱՄԵԱՆ

Մեր ամենասիրելի Ադամեանը մինչև այսօր յայտնի էր մեզ իբրև հանճարաւոր դերասան, տաղանդաւոր բանաստեղծ և շնորհալի նկարիչ, իսկ այսօր վերնագրեալ գրքով հանդիսանում է մեր առջև իբրև հոգեբան—վիլլիսոփայ։ Այս ամենը մի հայ մարդու մէջ... լաւ նշան չէ։ Կարգէ դուրս շնորհալի երեխայի կեանքը մի մազից է կախուած։ Կըմնդրենք Աստուածուց, որ չար աչքից ու փորձանքից ազատ պահէ մեր Ադամեանին, իսկ մենք այսու ամենայնիւ, ոչ իբրև չարաբաստիկ ազատ, այլ իբրև վսեման մայր՝ կասենք, որ Ադամեանը մի վաղահասուկ մանուկ է մեր կեանքի համար։ Հայկական դերարուեստի ներկայ խոպան անդաստանի վրայ այդպիսի մի քնքոյշ վարդ վերթեւել և աճել կարող չէ. նա կըթառամի վաղաժամ... Քանի որ զուռնան ու դիմբլնախաոն դեռ բաւականութիւն են տալիս մեր ճաշակին, ասլա ուրեմն մեզ համար դեռ մի և նոյն է՝ սոխակն է երգել, թէ աքաղաղը կանչել։ Մի բան, որ մենք կըսենդրենք պ. Ադամեանից, այդ այն է, որ նա քանի կենդանի է, քանի որ չունչ ունի բերանում, գրէ և շատ գրէ Շէքսպիրի և այլոց թատերական գրուածների մասին։ Իր աննմանելի խաղի միայն տիշատակը կըմնայ, իսկ գրուածքը մասամբ գրողի տեղը կըբռնէ և մեծ ծառայութիւն կանէ հայ թատրոնի աղքատիկ բեմի աղքատիկ պաշտօնեաներին։

Ներկայ գրուածքը ըստ ամենայնի լրացնում է հարցասիրի հետաքրքրութիւնը։ Նիւթը գրաւիչ, բացատրութիւնը պարզ և լեզուն կանոնաւոր։ Շէքսպիրի մասին սուտն և վիլլիսոփայօրէն խօսիլը հեշտ չէ, մանաւանդ Ադամեանի պէս մի դիւրազգաց և ոգևորութեան ենթակայ մարդու համար։ Բայց Ադամեանը հոգեբան-վիլլիսոփայի դերումն էս մի վատաբեալ ասպետ է։ Ճշմարիտ է, իրանից համեմատաբար քիչ բան է ասել, և այն էլ ամենայն զգուշութեամբ, բայց մի գրողի հաս-

կացողութեան և ճաշակի զարգացման աստիճանը որքան որ իր ինքնուրոյն գրուածից է երևում նոյնքան երևում է և նրա ընտրութիւնից, հիւսուածքից։ Մէթէֆքիչ հետաքրքիրներ կան, որոնք թանգարան մտնելով՝ ըստ առակին՝ ահագին վիթը չեն նշմարում։ Առակ կայ դարձեալ, թէ գիւղացին քաղաք գնաց և բազմատեսակ մրգեղէնների միջից իր անտառի թթու գիհուն ընտրեց։ Ամենքս էլ տեսնում ենք մի և նոյն բանը, կարդում ենք մի և նոյն գիրքը, լինում ենք մի և նոյն վիճակի մէջ, և այսու ամենայնիւ բանից դուրս է գալիս, որ մարդիկն ևս՝ բոլոր փիլիքական մարմինների պէս՝ երկու տեսակ են՝ թափանցիկ և անթափանցիկ, լաւ հաղորդող և վատ հաղորդող։ Պարոն Ադամեանը թափանցիկ է, որպէս հայելի և հաղորդող, որպէս ոսկի։ Նա մի մադնիտ է երկաթի փշրանքների համար, որոնցից կազմում է գեղեցիկ փունջը։ Եթէ Ադամեանն այսպէս, որքա՜ն առաւել Շէքսպիրը։ Ես, ինչպէս չատերը, Շէքսպիրը կարդում էի հիանալու, զմայլելու, այլ և սովորելու, զարգանալու համար։ Եւ այնուհետև ամեն մի ուրիշ գիրք կարդալուց յետոյ ասում էի ինքս ինձ. «իմ հանգիստ ուրիշ տասը գիրք կարդալու, աւելի լաւ է տասն անգամ կարդալ Շէքսպիրը». որովհետև նրա կարդալուց ոչ զգւում է մարդ, ոչ կշտանում, և որ առաւելն է՝ ամեն անգամ նորանոր մտքերի և զգացմունքների է հանդիպում։ Կարդալիս էլ այնպէս յափշտակվում էի, որ մոռանում էի, որ ես իմ սենեակումն եմ նստած, իմ սեղանի վրայ, իմ ձրագի առջև, որ առաջիս գիրք է, և ես կարդում եմ և ոչ թէ տեսնում. մէկ էլ յանկարծ՝ կարծես քնած տեղից զարթած՝ չորս կողմիս եղած առարկաները ինձ ծանօթ են թվում. նոր յիշում եմ, թէ որտեղ եմ գտնվում։ Ինչևիցէ, զարմանալուր բանն այն է, որ ես կարծում էի, թէ Շէքսպիրի ընթերցումը մի հոգեկան և մտաւոր զարգացում է տալիս միայն, բայց բանից դուրս է գալիս, որ նա իմ և նոյն ժամանակ և մի նշանաւոր և ազդու դեղ։ Այս գիւտն իմս չէ և գուցէ շատ շատերին լինի յայտնի, սակայն ես այս բանն իմացայ մօտիկ ժամանակներումս իմ ամենամերձ մի բարեկամից։ Ահա թէ ինչ է գրում նա ինձ մի գաւառական մուրհակի անկիւնից։

...«Շնորհակալ եմ, որ ուղարկեցիր ինձ Շէքսպիրը. դա ինձ ազատեց խելագարութիւնից։ Քեզ յայտնի է արդէն իմ ներկայ վիճակը, գիտես, թէ որքան նման է Էդգար Պլօստէրի վիճակին։ Ես գտնում էի ամի-աշխարայ, որ խելքս թռցնում եմ, և ինքս ինձ մի կերպ պահպանում էի թափառելով և ստէպ-ստէպ սառը ջրի օգնութեան դիմելով, ինքս ինձ սիրտ տալով, վրէժխնդրութիւնն ինձ օգնութիւն կանչելով, և յանկարծ ստանում եմ Շէքսպիրը։ Բաղդի բերմամբ ամենից առաջ կարդացի Աբքայ Լիրը, և, ինչ ես կարծում, այդ մարդու թշուառութիւնն այնքան մեծ տպաւորութիւն արաւ վերաս, որ ես իմ սեփականս մոռացայ, իսկ և իսկ Էդգարի նման, երբ նա հանդիպում է Լիրը թագաւորին. այո, մոռացայ իմ անիրաւ եղբարցս ապերախտութիւնը և ստոր դաւադրութիւնը։ Սրտիս թռթռոցը կտրուեց, ջղային գրգռմունքս հանդարտուեց»...

Ահա ձեզ ուրեմն մի վկեմ հեղինակութիւն, որ մի և նոյն ժամանակ՝ է և մի պատուական սիփափարան, մի մխիթարիչ Ոգի։ Ես

չգիտեմ՝ ինչ կասեն այս մասին Հոգեբան բժիշկները, բայց ես ինքս անձամբ մեծ և շատ մեծ սիփսիանք եմ զգում Շէքսպիրը կարդալիս և նոր եմ հասկանում, որ առաջ էլ այդ սիփսիանքն զգալիս եմ եղել։

Եւ զարմանալի չէ. Շէքսպիրը հանճարների մէջ մի Պրօմէթէոս է. նա է յափշտակել աստուածաչէն կրակը և ուրիշները նրանից են վառել իրանց ճրագները, ինչպէս Գիօտէ և Շիլլէր...

Կարդացէք նրա Համլէթը։ Մարդկային հոգու որ բարձրագոյն յուզմունքն ու կիրքն ասես, որ նրանում չլինի պատկերացրած իր ամենանուրբ գծերով – այնտեղ սէր, մտերմութիւն, ատելութիւն, վրէժխնդրութիւն, եղեռնագործութիւն, չարութեան դէմ բողոք ոգի, փառասիրութիւն, խրատասրտութիւն, թեթեւամտութիւն, խորագիտութիւն, խորամանկութիւն, դեղագիտութիւն, փիլիսոփայութիւն, ունայնութիւն աշխարհի, ապրելու չարժառիթ, յուսահատութիւն, և այլն և այլն... Ինչ զարմանք ուրեմն, որ մարդկային հոգու այս ովկիանոսի ահեղ հորձանքների մէջ անհետանան մեզ պէս մանր մարդկանց կիրք աստուած չնչին կոհակները։

Եւ պարոն Ադամեանը գրել է ահաւասիկ Շէքսպիրի և նրա Համլէթի մասին։ Եւ այս նիւթի մասին առաջին անգամն է խօսվում մեր գրականութեան մէջ բուն առարկային մօտիկ ծանօթ մարդու ձեռքով։ Ուրախ չնորհակալութեան և խրախուսանքի արժանի է ուրեմն պ. Ադամեանը։

Այժմ երկու նկատողութիւն։ Աստղները կան, թէ պ. Ադամեանը Համլէթի «լինի՞լ, թէ չլինել» մենախօսութեան ժամանակ սուր չպիտի ունենայ ձեռին։ Մեզ համեմատելի է պ. Ադամեանի վարմունքը, բայց ոչ իւր տուած մեկնութիւնը։ Սուրը ձեռին Համլէթի բնաւորութիւնն աւելի ևս պարզվում է, թէ նա որ աստիճան երևակայող, մտածող, երկմտող, տարակուսող և տատանուող է։ Ինքն անձնասպանութեան տրամադիր, սուրը ձեռին պատրաստ, բայց այստ ամենայնիւ ինքնասպանութիւն չի գործում, այլ դեռ մտածում է, թէ ինչ է կեանքը, մահը, և այլն։ Համլէթը մետաֆիզիկ է՝ Խմմնիցէլի Մետաֆիզիկի նման, միայն դրամատիքական վիճակում դրուած։ Նա իւր հօրեղբօրն սպանել ուզելիս էլ, երբ արդէն սուր ունի ձեռին և յարձակվում էլ է, բայց էլի նոր մեկնից սկսում է իւր մետաֆիզիկան։ Ուստի պ. Ադամեանի վարմունքի մէջ ոչինչ հոգեբանական սխալ չկայ, այլ ընդհակառակն տեխնիքական տեսակէտից ևս սքանչելի է, որովհետև սպզդան սուրը հանդիսականների ուշադրութիւնն աւելի ևս լարում է։

Վէճ կայ և Համլէթի կապմուածքի մասին, թէ նա նիհար էր արդեօք թէ գէր։ Гербел-ի հրատարակած Համլէթի մէջ մօր գործ դրած դէր բառը դուրս է ձգած, երևի նրա համար, որ գուցէ քննադատները ապացուցել են, որ այդ բառը Համլէթին ուղղակի չի վերաբերում, այլ գուցէ Բէօրբէջ դերասանին, որ Համլէթի դերը խաղացող մի հանճարեղ, բայց գէր դերասան է եղել։ Այս շատ հաւանական է։ Յուզմունքների այն ահեղ ալիքները, որոնց մէջ ծփում է Համլէթը և այն բնաւորութիւնը որ նա ունի, կարող էին մի օրումն ևս մաշել նրան, եթէ գէր էլ եղած լինէր մի ժամանակ։ Նա լինքն ասում է մի տեղ «ես տկար եմ և թախծութեան ենթակայ, իսկ նա ուժեղ

է»... Բայց Գէօտէն ասել է, որ նա գէը էր։ Ընդունում ենք, թէև դա մի ենթադրութիւն լինէր, բայց դրա հետ պէտք է ընդունենք Գէօտէի աւելի նշանաւոր խօսքը, թէ «Ով որ ուզում է բանաստեղծին հասկանալ, պէտք է մտնի նրա աշխարհը», որ ասել է՝ բանաստեղծին հասկանալ ուզողը լինքը բանաստեղծ պէտք է լինի։ Այսպէս է արդեօք։ Եթէ այսպէս չէ, լաւ է որ այսպէս լինի, որպէս զի ամեն ոք գլխապատառ, կօշկիները հագին, չյանգնի Շէքսպիրի աստուածային աշխարհը մըտնել և կամ չարճախուճ պ. Ադամեանի վրայ՝ առանց նրա տաղանդն ունենալու։ Համեստութիւնը և պատկառանքը վատ յատկութիւններ չեն։

Ղ. Ա.

«ԼԵԶՈՒ»

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻ ԼԵԶՈՒԻ ԱՌԻԹՈՎ

Այստարկի Հայոց ամսագրութեան Թիւը երկուսով աւելցաւ. Վ.լեննայում սկսուեց հրատարակուիլ «Հանդէս Ամսօրեայ» և Պօլսում՝ «Լեզու» Ուսումնասիրութի։ Երկուսն էլ ուշադրութեան արժանի և պատկառելի աշխատութիւնները են։ Առաջինը խօսում է գիտութեան ամեն ճիւղի վերաբերեալ ժամանակակից խնդիրների մասին, մինչ երկրորդը խօսում է գրականութեան մասին։

Լեզու Ուսումնասիրութիւնը իւր ընդհանուր լեզուաբանական տեսութեան հետ ունի և մի գործադրական բաժին։ Այդ բաժնի մէջ լեզուագէտ Թամրազեանը, որ է յայտնի Հ. Տեռվիշեանը, յառաջ է բերում իւր կարծիքով՝ սխալ գործածուող բառերը ու ոճերը և ցոյց է տալիս նրանց ուղիղ գործածութիւնը։

Մեր ուսուցիչների ուշադրութիւնը Հայր Տեռվիշեանի յառաջ բերած սխալների վրայ դարձնելու համար՝ մենք ուրախութեամբ կարտատպենք նոյնը «Ազբիւրի» դատարակների բաժնում։ Եթէ երբեմն մեր կողմից էլ այդ սրբագրութիւնների մասին կը յայտնենք մեր կարծիքը, դրանից, յոյս ունենք, որ պատկառելի հեղինակը չի վրդովուի, այլ կաշխատի նորանոր և աւելի հիմնաւոր փաստերով արդարացնել իւր ասածների ճշմարտութիւնը։

Ա.հաւասիկ «Լեզուի» առաջին համարում յառաջ բերած սխալները.

ՕՏԱՐ ԵԻ ՍԽԱԼ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ ԼԵԶՈՒԻՍ ՄԷՋ

Մի քանի, Մի քիչ եւայլն։ — Ամէն ինչ։

Ընթերցողք անշուշտ չեն ստգրտանեը, եթէ տեսնեն որ խորագրով նշանակուած աստղուածները կը դատարկարտենք՝ թէև գոնէ քաղաքիս մէջ մեծ ընդհանրականութիւն առած ըլլան թէ գրութեանց և թէ ուսումնականաց խօսակցութեանց մէջ։

Դատարկարտութեան վէճեն հաստատուած է բանասիրական լեզուագիտութեան սա հիմնական յօդուածին վրայ. ժողովուրդն է ազգային լեզուին անսխալ յօրինիչն։ Այդ վերագոյն չիշուած բացատրութիւնները անծանօթ են բուն հայ ժողովրդեան, ուրեմն հայ ուսումնականք օտար լեզուէ

առած կամ սխալ գործածած են, բայց նաև հին մատենագրութիւնն այս կերպ գործածուած չի ճանչնար: Սա՝ մի մասնական անունը կամ անորոշ ածականն, որ բաւական յաճախ գործածուած ունի, երբէք, եթէ չենք սխալիր, ուր յարակից բառին նախադաս չ'ըներ: Եւ ոսկի դարու մատենագրութիւնն իսկ քանի մը տեղ գործածած է քանի մի:—Այսպէս մի քիչ ձևն ալ՝ որուն երկրորդ բառն հայերէն իսկ չէ, առաջնոյն զօրութեամբ կը գտնալարտուի: Նոյն ոճին համար տալու համար՝ մեր հին լեզուն ունի սակաւիկ մի (մի՞շտ յետադաս մասնական անուն), որ վայելչօրէն սկսած է արդէն կերպառութիւն ստանալ արդի լեզուի մէջ, միանակ այն խժական մի քիչ հնչուածնին:

Ուրեմն մի քանի, մի քիչ և ուրիշ ասոնց նմաններն երբեմն եկամուտ գործածութիւնք երևումը մերժելի են, երբ պէտք մըն ալ չունինք անոնց: Ասոնք մեր մէջ մուտք գտած են թուրքական կամ մանաւանդ գաղղիական ազդեցութեան տակ, երբ պիր քայ, պիր ազ, un peu:

Նոյնպէս ամէն ինչ, զոր նմանապէս երբեմն կը հրատարակենք, թէև օտար չէ, բայց անյարմարը (նոր և հին) մասերէ կազմուած ըլլալուն խորթ կը հընչէ զգայուն լսելեաց: Ամէն՝ որ հին դասական մատենագրութեան մէջ գրեթէ անլուր է, արդի լեզուի բառ կը համարուի, իսկ ինչ երբեմն մասնական անուն հին լեզուին յատուկ է: Ուստի և գործածութիւնն որպէս զի բնական ըլլայ, կամ ըսելու է ամենայն ինչ հին ձևով, կամ ամէն բան արդի լեզուիս ոճով: Թէև մեր թէ հին և թէ նոր լեզուն մի՞շտ հայերէն է, սակայն որովհետև բառերն երբեմն իրարմէ զատուած գործածութիւններ և առումներ ունին, այսպիսիներն խառնել անպատեհ է, և զգուշութեամբ խորշելի ամէն բանասէր գրագէտ գրիչներէ:

Այս յօդուածի դէմ շատ և շատ բան կարելի է ասել, բայց շատախօսութենէ փախուստ տալու համար մենք կը համառօտենք մեր ասելիքը:

«Մի» բառը «մէկ» բառի նոյնանիշն է: Դա թուական է, ուրեմն և ածական: Դա չունի գերբաբառի «ոմն» կամ «ոք» բառի յատկութիւնը, որովհետև «ոմն» գործ է ածուում միայն մարդու համար. կարելի չէ ասել շուն ոմն, ծով ոմն, քար ոմն, բայց կարելի է ասել՝ մի կամ մէկ շուն, մէկ ծով, մէկ քար, և մինչեւնոյն ժամանակ՝ մէկ մարդ, մէկ կին, մէկ հարուստ, մէկ աղքատ, և այլն *:

Այդ, այդ մին կամ մէկը այստեղ ցոյց է տալիս ոչ թէ առարկայի թիւը, քանակութիւնը, այլ ցոյց է տալիս որ և է առարկայ, անորոշ, բայց նա դարձեալ մի և նոյնն թուականն է: Բառը մի և նոյն է, միայն երկու գործածութիւն ունի,—մէկ տեղ ցոյց է տալիս առարկայի թիւը, քանակութիւնը, միւս տեղ՝ անյայտութիւնը, անորոշութիւնը. սակայն երկրորդին դէպքումն ևս նա ածական է:

Արդ մեր բոլոր բարբառներում և նոր գրական լեզուի մէջ բոլոր ածականները, առանց բացառութեան, նախադասում են: Առանձնապէս

* Մի ժամանակ գրաբառում գործ են ածել՝ ոմն ձի, ոմն ձեռն, ոմն գրուածք, ոմն երկաթ, ոմն գետ, և այլն, բայց՝ երբեք ոչ հայերէն՝ ընդունելութիւն գտած չէ:

«մի», ըստ ղարաբաղցոց՝ մին, գոկեցիէն՝ մոյն, բառը բոլոր արևելեան բարբառներում, առանց բացառութեան, նախադասում է *։

Այդ բառը կրճատուել, աղճատուել է արևմտեան բարբառում և դառել է ըմ և մը։ Նրանք ասում են—կատրըմ հաց, վարչըմ ջուր. և—հաւ մ'ունիմ (հաւ—մը—ունիմ) ինչես մարդ մ'եղեր է (մարդ—մը)։ Այստեղ երևում է, որ յետադաս հայնաւորով սկսվող բառը մեծ ազդեցութիւն ունի ըմ մասնիկը մը չինելում, և այդ զարմանալի չէ։ Մենք մէկ ուրիշ մի էլ ունինք, որ արգելական մակբայ է։ Այդ արգելական մի բառը, որ շատ բարբառներում և գրաբառում ևս նախադաս է գործ ածվում, Ղարաբաղի և նրա մօտ բարբառներում յետադասվում է. Նրանք ասում են, կեանչ մի, անչ մի, ասել մի, ասել մի, անել մի, հայլեն, ինչպէս մեր Թաթարերէնում՝ գէթմա, գեալ-մա, գեօր-մա, հայլեն։ Իսկ արևմտեան բարբառում որ նախադաս է գործ ածվում, կըրճատվում էլ է, երբ յետադաս բառը ձայնաւորով է սկսվում, (ինչպէս մ'ըսեր, (մի ըսեր, մի ասեր) մ'աններ, մ'ուտեր, մ'երթար հայլեն։

Ինձ պէտք չէ (և չեմ էլ կարող) ցոյց տալ, Թէ որ օտար լեզուի ազդեցութեամբ են աղճատուել մեր բառերն ընդհանրապէս և մի բառը մասնաւորապէս։ Զկայ բարբառ, որ չլինի փոխառեալ գաղերի ընթացքում նաև առանց ազդեցութեան օտար լեզուի, որովհետև լեզուի փոփոխութեան վրայ ազդեցութիւն ունեցող շատ բաներից մէկն է միայն օտար լեզուն։ Այս պատճառով միակողմանի է այն մարդոց դատողութիւնը, որոնք մեր լեզուի ամեն մի աղճատմունքը վերագրում են այս կամ այն օտար լեզուին, առանց իւ նկատի առնելու ուրիշ շատ յայտնի և անյայտ հանգամանքներ։ Այս միակողմանիութիւնից ազատ չէ նոյն ինքը Հ. Տեր-Վիշեանը, որից աւելի ևս սպասելի էր, երբ գիտնականից, մեծ զգուշութիւն։ Օրինակ, ինչպէս տեսանք, նա ասում է՝ մի քիչ ասելը մուտք է գտել մեր մէջ Թուրքական կամ մանաւանդ? գաղղիական ազդեցութեան տակ՞. . . **

* Տաճկաստանցի գրագէտները և մեզանում պ. փ. Վարդանեանը և Հ. Խաչիկեանցն, գործ են ածում «մինն» փոխանակ «մինը», հնարադրելով երևի, Թէ նու տառն այստեղ որոշիչ յօդ է։ Անդ սկսելից մեր ոգատելու համար, պէտք է ասեմ, որ «մի» Թուրքահայի նախնական ձևն է «մին» և ոչ «մի», ինչպէս որ «երկու» բառի նախնական ձևն է «երկուս» կամ «երկուս», «քանի» բառի նախնական ձևն է «քանիս» կամ «քանիք»։ Այս իսկ պատճառով այդ բառերը հոլովուելիս, իրանց կորցրած տառը երևան են հանում, ինչպէս՝ քանի, քանի-սը, քանի-սի, քանի-սից. երկու, երկու-սը, երկու-սի, երկու-սով. մի, մի-նը, մի-ի, մի-նից։ Գրաբառի վերաբերութեամբ տե՛ս Հայկազեան բառարանում։

** Ճշմարիտ է, որ «քիչ» բառը հայերէն չէ. բայց այստեղ վէճն այնքան «քիչ» բառի մասին չէ, որքան «մի» բառի նախադասելու մասին։ Գրաբառի բարբառում «քիչ» բառի տեղ գործ է ածվում «սրբկի» բառը։ Ասում են՝ սրբկի ա, սրբկիացալ ա (քիչ է, ըչացել է), իսկ «մի քիչ» ասելու տեղ՝ ասում են՝ մը-սրբկ, մը-սրբկի, երբ՝ մին սրբկի. ասում են և «մըթա, մըթա», երբ՝ մի լաւ, յայտնի ապացոյց, Թէ «մի» բառը նախադասուելիս է եղել նաև այն հին ժամանակներում, երբ դեռ ևս «քիչ» բառը մտած չի եղել մեր մէջ։ Դեռ ապացուցած չէ, որ գրաբառի համաձայնութիւնը, այն է՝ ածականի յետադասութիւնը և հոլովվ

Մարդ հարցնէ. Հայը գիտնական-նէն, թէ գաղղիացիք ի՞րը են ազդեցուԹիւն ունեցել Հայոց գաւառաբեդուի վրայ, կամ եԹէ Թուրք, պարսիկ, վրացի, օս և այլ վայրենի և քաղաքակիրԹ ազգեր կասեն մի մարդ, մի գոմէշ և այլն, ինչու՞ Հայերն էլ՝ իրրև մարդ հակներին ցեղակից՝ նոյն ձևը չէին գործ ածել։

Այստեղ Թոյլ ենք տալիս մեզ նեղանալ Հայը Տերվիշեանից, որ նա առհասարակ լեզուի վրայ խօսելիս մեզ արևելցոց Հայի տեղ չի դնում, այլապէս նա ոչ միայն այդպիսի խոշոր սխալները չէր անիլ, այլ և կուրախանար բոլոր այն ոճերի և բառերի վերաբերուԹեամբ, որոնք մտնում են արևմտեան գրական լեզուի մէջ մեր՝ արևելեան՝ գրականուԹեան ազդեցուԹեամբ։ Նա ասում է՝ «ժողովուրդն է ազգային լեզուին անսխալ յօրինիչն», և այս ասելով՝ մէկ անգամից երկու խոշոր սխալ է անում։ Առաջին սխալն այն է, որ «ժողովուրդ» ասելով՝ նա մեմիայն բնիկ պօլսեցոց է ակնարկում. ուրիշ ոչ մի գաւառաբեդու—Վանի, ՋէյԹունի, Մշու, Աբարատեան, Աղցախու, Գուգարաց աշխարհի, Հայկն, չուկնի և նիկատի, և լեզուագէտ լինելով Հանդերձ՝ չի երևում, որ ծանօԹ լինի այդ բարբառներին. և երկրորդ ու աւելի խոշոր սխալն էլ այն է, որ ժողովրդին ազգայական Հետ համաձայնուԹիւն ուղիղ Հայկական մի ոճ լինի։ Մեր ոչ մի բարբառում չկայ այդպիսակ համաձայնուԹեան Հետք, և նոյն իսկ գրոց լեզուում այդ կողմանէ միակերպուԹիւն չկայ։ Ահա մի խնդիր, որի լուծումը Թողում ենք Հ. ՄխիԹարեաններին վրայ. Թող ապացուցանեն, որ «Յիսուս Քրիստոսիս Տիրամբ մերով» ասելը ուղիղ Հայերէն է։

չին գրական լեզուի անսխալ յօրինիչ է համարում։ Այս սխալն աւելի խոշոր է նրա համար, որ նա չի տարբերում, գանագանուԹիւն չի տեսնում գրական լեզուի և մի որ և է բարբառի մէջ։ Գաւառաբեդուի, բարբառի յօրինիչը արդարև ժողովուրդն է, և նա յօրինում է անսխալ, կանոնաւոր, ներդաշնակ. նա իւր ազգատումներն էլ՝ բառերի վերաբերուԹեամբ, կանոնաւոր է անում, իւր հնչիւններն էլ՝ տառերի վերաբերուԹեամբ՝ կանոնաւոր և ներդաշնակ է փոխում. նրա տառադարձուԹեան մէջ էլ խիստ կանոնաւորուԹիւն կայ։ Բայց այսու ամենայնիւ նա չէ գրական լեզուի։ Գրական լեզուի յօրինիչը ժողովուրդը չէ, այլ գրագէտները են, որոնց աշխատուԹեամբ բոլոր բարբառախօս ժողովուրդներին մեակերպ մօտաւորապէս հասկանալի մի աւելի մշակուած, աւելի վսեմ և ճոխ լեզու է յօրինվում հետզհետէ։ Բարբառը յօրինվում է բնազդմամբ, մինչ դեռ գրական լեզուի յօրինման մէջ գիտակցուԹիւն կայ, և այդ գիտակցուԹիւնը երբեմն հասնում է մինչև սոպռ և խորին տգիտուԹեան։ Այդ տգիտուԹեան մէջ ընկղմվում են բոլոր այն գիտնականները, որոնք նրանց լեզուագիտուԹեան վրայ յոյս դրած՝ ազգային լեզուի ոգուն խորԹ և օտար ոճերը ու բառերը են գործ դնում, որով յօրինում են մի... այլանդակ հրէշ։ ԹերԹեցէք յընԹացս երեսուն տարուան մեր ազգային գրականուԹիւնը և կըտեսնէք, Թէ ով ասես, որ իր սափրիչուԹիւնը նրա գլխին չլինի փորձած. ինչ վէՀեր, ինչ բանակռիւներ... Այդ վէՀերին, այդ կռիւներին ժողովուրդը բնաւ երբէք մասնակցած չէ, և մենք այսօր՝ լաւ Թէ վատ, ազքատ Թէ Հարուստ՝ երկՀիւղ գրա-

գոյականի Հետ համաձայնուԹիւը ուղիղ Հայկական մի ոճ լինի։ Մեր ոչ մի բարբառում չկայ այդպիսակ համաձայնուԹեան Հետք, և նոյն իսկ գրոց լեզուում այդ կողմանէ միակերպուԹիւն չկայ։ Ահա մի խնդիր, որի լուծումը Թողում ենք Հ. ՄխիԹարեաններին վրայ. Թող ապացուցանեն, որ «Յիսուսիս Քրիստոսիս Տիրամբ մերով» ասելը ուղիղ Հայերէն է։

կան լեզու ունինք, շատ լաւ հասկանում ենք մեր մեծերից ասածը և մինչև անգամ գիտենք օրոշել լաւը վատից և գանագանել առողջ ու տկար ուղեղները արդարադատութիւնները մեր մեծերից։

Վեր առնենք նոյն իսկ «Լեզու» Ուսումնաթերթի լեզուն և տեսնենք որքան նման է նա ժողովրդի՝ չասենք յօրինուածին, այլ յօրինելու ձևին, մեթօդին։

Վերապատուելի հայրը գործ է ածում — սպառնել, երկնաբերձ, դոյզն, բնակերատութիւն, վարկպարագլ, վայրապար, դաշնակաշունչ, ուսումնակաՆԱՅ, խոսակցութԻԱՆՅ և այլն, և այդ բառերի ու ձևերի մօտ դնում է— անկէ, ինէ, քենէ, մենէ, մ', մը, մըն, աս, ան, ատ, ըսել, ընել, կըներ, ըլլալ, «պէտք մըն ալ չունինք անոնց» և այլն։ Մինչդ ժողովուրդն այսպէս աններդաշնակ լեզու է յօրինում։ Պիտի ասէք՝ «Ուսումնական մի յօդուածի մէջ ամամայ պէտք է մտնեն այնպիսի բառեր, որ ամկի լեզուի մէջ չկան»։ Համաձայն ենք, բայց այսու ամենայնիւ ներդաշնակութիւնը ամեն տեղ գլխաւոր տեղը պէտք է բռնէ։

Օրինակ՝ գրում էք՝

«Բանասիրական լեզուագիտութեան սա յօդուածին վրայ»։ Այս նախադասութեան մէջ ինչ գործ ունի սա բառը։

«Ինչո՞ւ անանկԱՅ որդիք արժանի չըլլան ազգին զոհողութԻԱՆՅ»։ Եթէ կարելի է ասել—տնանկայ, զոհողութեանց, ինչո՞ւ կարելի չէ ասել — չըլինին, այլ անպատճառ պէտք է լինեն չըլան։ Եթէ «չըլինին» գործածական չէ Տաճկաստանի ժողովրդի համար, նրա համար գործածական չէ և տնանկաց, զոհողութեանց։

Դարձեալ մի օրինակ և աւելի երկար.

Իրաւ է, տղայութեան սխեղծ հասակին մէջ երբ բանաւորութիւնն տակաւին չէ բացուած, խօսիլն այլ կը սորվեցնեն մարդուն կամ ինք լսելով տակաւ կը սորվի անոնցմէ, բայց նաև ինքնին կարող է ծնընդեամբ բանաւոր մարդն՝ խորհրդութիւնն տակաւ կերպաւորելուն համեմատ՝ լինքզինք հայնիի հասկցնելու եղանակը գտնել, կամ որ նոյնն ըսել է, լեզու մը հնարել»...

Ժողովուրդը լեզուի յօրինիչ է, բայց հրպիսի լեզուի և հրպիսի յօրինիչ է։ «Փոքր» բառի տեղ գանագան գաւառաբարբառներում գործ են ածվում — կուճուր, պուճուր, պլճիկ, ծկիկլօ, պստի, պզտի, պըտի, պլճկիկ, պըտ, (պըտ-օյդի, փոքրկիկ հարս)։ «Ողջ» և «բոլոր» բառերի տեղ՝ դիւի, լոխ (սրա սեռականն է լոխու և ոչ լոխի) քօմմա, չեմ, (սեռական է չեմնի) յմեն, զմեն, սաղ, բիւրեուն, բիւրեաւի, բիրադի, թամամ, և այլն։ Կրկինի բառը—կուլի, կըլի, կընի, կըլայ, կըլլայ, կեղնի։ Այժմ բառը—հիմի, հիմա, հիմակ, մըհի, մհկի, հմիգ, համան, մըկա, ըսկէ (երևի խոկոյն)։ Նորա — նըրա, ընդրա, ընդուր, ընոր, էնոր, նըւոր, անոր... այսպէս և մեւս դերանուններըը։ Այս տեսակ անթիւ բառեր կարելի է մէջ բերել և հարցնել այնուհետև, թէ այդ բառերից որիմն պէտք է նախապատուելուն տալ և պատասխանել, թէ ի հարկէ, և ոչ մէկին։ Այն բառը, որ դանագան տեղ դանագան ձևով է գործ ածվում, պէտք է վերցնել նրա չըխանգարուածը, ճիշտը, ուղիղը։ Եւ այս տեսակէտով կարծեմ վերացաւ տաճկաստանցոց կոր մասնիկը. ինչո՞ւ ուրեմն մըն ևս չընինել մի, ըլլան՝ լինել, ընելը՝ անել, ըսելը՝ ասել, կընալը՝ կարենալ, և այլն։

Օրինակ առնենք անցեալից—

Շատ ժամանակ չէ, որ Ճնունդ առան մեր գրականութեան երկոքին Ճիւղերն ևս։ Սկզբումը աշխարհիկ լեզուով գրողների նպատակը շատ սարդ էր. տեսան, որ ժողովուրդը գրաբառ գրածները չէ հասկանում, խելացել, ժողովրդասէրը, նրանց հետ և մնասին և շահասէրը, կրօնի որսորդները, սկսեցին ժողովրդի լեզուով գրել։ Դուրս եկան մինչև անգամ հայատառ և Թուրքալեզու գրքերը, ըստ բովանդակութեան մինչև անգամ կրօնական և հայ եկեղեցականների ձեռքով գրած։ Շատ չանցաւ, յանկարծ այդ աշխարհիկ և ռամկական լեզուն ընդհանուր գրական լեզու դառնալու յաւակնութիւն ստացաւ։ Հաւաքուեցան բոլոր բանասէրները, որ «էշը ցեխոյը հանեն»։ Մեծ վէճ բացուեցաւ բանասէրների մէջ. երկու ահագին բանակների բաժանուեցան—հակառակ և պաշտպան նոր գրական լեզուի։ Հակառակ բանակը գրոց լեզուն էր պաշտպանում, աշխարհիկը նրա լանգարմունքը համարելով։ Նրանք այն էլ էին ասում, որ եթէ գրաբարը մերժեն, այնուհետև պէտք է ուրենան ոչ մէկ, այլ երկհիւղ գրական լեզու, այն է՝ արևելեան և արմտեան, իսկ այդ համարում էին ազգավնաս մի բան։ Այս ընդհանուր վէճի մէջ Ռուսաստանի հայերը յաղթող հանդիսացան, և այդ ոչ թէ նրա համար, որ աւելի գիտուն էին քան թէ տանկաստանցիք, այլ նրա համար միայն, որ նրանց աչքի առջև էր կատարվում ռուսաց աշխարհիկ լեզուի Ճնունդն ու բարգաւաճումը։ Ռուսաստանի հայ բանասէրները այլ կերպ մտածել չէին կարող, քան որ մտածում էին նրանց ժամանակակից ռուս բանասէրները։ Ցանկարծ դուրս է գալիս մի Աբովեանց և հինօրեայ կաղնին կացնով է կտրում։ Խորտակելով գրաբառի շղթաները, Ճարտար փաստաբան է հանդիսանում ռամկի լեզուի։ Այդ, ի հարկէ մի ծայրայեղութիւն էր, թէև բոլորովին բնական։ Պատրաստի գրական աշխարհիկ լեզու չկար, գրաբառը մատչելի չէր ժողովրդին, հանճարի սրտան այրվում, խորովվում է, և նա վեր է առնում ժողովրդի դարերով կազմակերպուած լեզուն։ Նազարեանցին աւելի յայտնի էին լեզուի զարգացման օրէնքները։ Ամենից առաջ նա հասկացաւ և հասկացրեց, որ գրական լեզու և բարբառ տարբեր-տարբեր բաներ են, թէ գրական լեզուն կարող է բարբառները, լինչպէս և գրոց լեզուն, աղբիւրները համարել իր պարգաւաճման համար, որ սկզբումը կարող է լինել աղքատ և ռամիկ, բայց հետզհետէ կըհարստանայ և կազնուանայ։ Եւ այդպէս էլ սկսեցին վարուիլ, սկսեցին հոգ տանել նրբա հարստութեան, ազնուութեան վրայ։ Ահա այս Ճոխացնելը, այս ազնուացնելը՝ է յօրինումն լեզուի. իսկ այս մեծ գործն կատարողը անշուշտ ժողովուրդը չէ, այլ ժողովրդի դաստիարակիչները են։ Այս Ճոխացնելն ու ազնուացնելն ունի և այն մեծ հետևանքը, որ մեր գրական լեզուի երկոքին Ճղները երկու հակառակ ծայրերից չեն հեռանում մեմեանցից, այլ դնում են երբարու հանդիպ, և ուշ թէ վաղ՝ պիտի հանդիպին մեմեանց և գրկեն զերար։

Այս փոխադարձ մօտենալուն եթէ հակառակ չեն Մխիթարեան հարք (թէ վիեննայեցիք և թէ վենետկեցիք), բայց բնաւ երբէք մշակակից և աշխատակից չեն այդ բանին և չեն էլ կարող լինել։ Արևմտեան գրականութիւնը մին-

չև այսօր չի ազատուել Մխիթարեանց Հնչող և ստրկացնող ազդեցութիւնից։ Մխիթարեանք մոլորուած ունին կարծելու, որ ինչպէս գրաբառի մշակութեան մէջ առաջնորդող Հանդիսացան, նոյն առաջնորդութիւնը կարող են նրանց վրայ առնել և նոր գրական լեզուի վերաբերութեամբ։ Բայց այդ մի ինքնախաբուածութիւն է։

Ով որ գիտէ, թէ ինչ ասել է Ազգային-Ժողովրդական գրականութիւն, նա ոչ մի րոպէ չի կասկածիլ, որ այդ բանը ոչ Մխիթարեաններից սպասելի է և ոչ էլ պարտական են նրանք ծառայելու այդ բանին։ Նոր լեզուն պահանջում է նոր կեանք, կեանք ժամանակակից, ազգային, ժողովրդական, իւր բոլոր Դիւական և Հրեշտակային կողմերով։

Աշխարհային կեանքի համար չեն հոգևորականները։ Այդպիսի մի բան սպասել հոգևորականներից, մեզ՝ աշխարհականներիս՝ նեբելի չէ։

Այդպէս որ չլինէը, մեր սիրելի Հայրիկը մի հանճարաւոր վիպասան կլլինէը այսօր։ Ի՞նչ չէը լինել Հայր Ալիշանը. բայց նա կամայ ակամայ, իւր բնական կոչման հակառակ՝ իրան նուիրում է ոչ ստեղծագործութեան,՝ այլ հնութեան. եղած պարագաներից նա շինում է մի Սիսուան, որ ինչքան և ոգելից, ինչքան և հոյակապ, չէ ստեղծագործութիւն, չէ ազգային-ժողովրդական գրականութեան մի շէնք, չէ նոր լեզուի և գրականութեան հաստատութեան համար մի չաեմարան։ Նրա բանաստեղծութիւնները խոկ վերացական սիրոյ արգասիք են. մարդկութիւն չկայ նրանց մէջ. և այդ բոլորը... ակամայ, վերարկի պատճառով, իրանց ստացած կրթութեան, իրանց ունեցած ուղղութեան պատճառով։ Զեն կարող ձգձգել, ուրախանալ, զուարճանալ, լանգալ, սիրել, «Ջան ասել-Ջան լսել, այլ ողբալ, լալ, հառաչել», սլանալ դէպի երկինք... Անտանելի վիճակ, բայց և անհերելի ինքնասպանութիւն։ Աւարիչը տուել է Հայոց ազգին մի հատիկ Ալիշան և նա էլ՝ Յովհաննու պէս՝ իրան ծովն է նետել... Աստուած վկայ, իմ սիրտս կաթսաւում է, երբ մի առ մի յիշում եմ, թէ որքան վնասները է տուել մեր գրականութեանը, մեր ազգային կեանքին, կեղծ-կրօնական ուղղութիւնը։ Քանի՛ քանի տաղանդաւոր վարդապետները ենք ունեցել, որոնք թողել են մեզ կմախքները միայն, առանց մարմնի և հոգու։

Ի՞նչ արած, պէտք է հաշտուիլ կրողութեան բնական ընթացքի հետ և չմարսարար տատասկից Թուզ և փշենուց խաղող չպահանջել։ Բայց և մեր սրբը Հայրերը գոնէ այնքան բարեխղճի լինին, որ ուր որ իրանք մտնել չեն կարող, չարգելեն մտնողներին, չնախատաշարեն, չվարկանդեն նրբանց, ինչպէս որ այդ անում են Հայր Մխիթարեանք, որոնք ձրգտում ունին իրանց բռնած սխալ ճանապարհով քաշ տալու և ուրիշներին։

«Ուրեմն մի քանի, մի քիչ և ուրիշ ասոնց նմանները իրրև եկամուտ գործածութիւնք իրաւամբ մերժելի են, երբ պէտք մըն ալ չունինք անոնց»... Այսպէս է խորհուրդ տալիս Հ. Տերվիշեանը։

Այս առիթով աւելորդ չենք համարում մեր կարծիքը յայտնել օտար բառերի և դարձուածների գործածութեան մասին։

Լեզուն բառերից է կազմած, որոնք՝ ըստ քերականների՝ բաժանվում են «մի քանի» մասերի։ Լեզուագէտներին ենք թողնում

ուսումնասիրելու, թէ բառերի ո՞ր դասակարգի մէջ կան աւելի օտար, գաղթական բառեր, ո՞րն է աւելի կամ պակաս վոխառութեան ենթարկուած, եւ ես վեր կառնեմ այժմ, իմ ասելիքս ապացուցանելու համար՝ այն բառերը, որոնք նիւթական առարկայի անուն են: Եւ նախ և առաջ պէտք է հարցնեմ, թէ ո՞րն է նախագոյն, առարկան, թէ՞ նրա անունը: Անշուշտ առարկան նախագոյն է, թէև արժանայիշատակ Մխիթարեանք գաղափարը՝ ըստ Պլատոնի՝ առարկայից նախագոյն էին համարում: Գուցէ այդպէս էլ լինի, եթէ դատելու լինինք փիլիսոփայաբար, այսինքն եթէ այնպէս խօսելու լինինք, որ մենք էլ չհասկանանք մեր ասածը. բայց մարդկօրէն խօսելով՝ նախ առարկան է և ապա նրա անունը, ըստ որում չծնուած երեխան աւելի շուտ կարող է անուն ունենալ, քան չեղած առարկան, որովհետև երեխայի համար դեռ կարելի է գուշակել, որ պիտի ծնի և այս ինչ անունը պիտի ստանայ, բայց հինգերորդ դարում, թէկուզ ասկետէն չլինէը նա, այլ ադամանդից, չէին կարող ասել՝ շոգենաւ, հեռագիր, լուսանկար, երկաթուղի, օդագունդ: Յայտնի է, որ այս բառերը մեր ժամանակումն են շինուել, որովհետև առարկաները իրանք մեր ժամանակի գիւտերը են: Այդ բառերն այսօր օտարամուտ չեն համարվում, որովհետև հայացրած են, թէև դրանք չեն ոչ հինն գրոց և ոչ նորկայ ժողովրդական: Բայց քանի՛ քանի՛ բառեր կան, որոնք օտար երկրից են գաղթել մեր մէջ և չեն ընդունել ոչ մեր կրօնը և ոչ մեր լեզուն: Օրինակ ձեզ՝ «չայ», կուգես՝ ասա թէյ, այդ մի և նոյն է, կաֆէ, շաքար, կարտոֆիլ (կուգես ասա վարդաբէս, կամ գետնախնձոր, որ բոլորովին ուրիշ բան է) թամբաքո, կուգես ասա թիւթիւն, միայն ոչ ծխախոտ, որ հայի սեռակից չունի, բայց ինչո՞ւ երկարացնեմ. դուք ինքներդ յիշեցէք, թէ ինչ կերակուրների անուն գիտէք, ինչ հագնելիքի, ինչ կահ-կարասիքի, ինչ դեղ ու ճաշի, ինչ ցաւերի, և կըտեսնէք, թէ որքա՜ն անթիւ են դրանք. բայց գիտէ՞ք ո՞րն է նիւծադելին. այն, որ մաքրասէր հայագէտները միշտ վոխառեալ են տալիս այդ տեսակ բառերը գոր ածելուց: Օրինակ՝ նրանց համար կան միայն կերակուր և խորոված բառեր, բայց չկան փլաւ, տոլմա, բոզբաշ, բուզլամա, չոբրթմա, բորշ, սուպ, բուլեօն և այլն, բայց ուտել սիրում են, մանաւանդ փլաւը, թէև ոչ նրա անունն է հայերէն և ոչ ինքն է հայի կերակուր:

Հագուստի վերաբերութեամբ էս մաքրասէրները միևնոյն են տալիս նրանց իսկական անունը տալուց. օրինակ նրանք գոր՜ծ են ածում մի պիտակ բառ, թէկուզ այդ գլխարկը լինի ֆէս, փասխա, քիւլլահ, թասակ, արաքչին, քօղոզ, շապօ, ղալփակ, և այլն: Դրանք գոր՜ծ են ածում վերարկու բառը, թէկուզ նա լինի եաքնջի, քըրդի աբա, մուժիկի արմեակ, ռասկ չինէլ կամ պալտօ: Եւ ինչ օգուտ ունինք վոխառած տալուց, քանի որ ժողովրդի լեզուն հեղեղված է և հեղեղվում է օտար բառերով, որոնք հայանալու տրամադրութիւն չունին:

Քաղաքակրթութիւնը վոխում է մեր նիստ ու կացը, մեր սովորութիւնները, մեր հագուստը, մեր կերած խմածը: Գիտէ՞ք ինչքան խմելիքներ կան մեր ժամանակում, և մի՞թէ ամէնին էլ կարելի է ասել օղի, գինի կամ շաքարօղի... ինչ և իցէ... վերջապէս քաղաքակրթութիւնը վոխում է

և մեր մտածելու եղանակը, խօսելու ձևը։ Հին հայերը յոգնակի ձևով չէին խօսում, թէև երբոյդ դէմքով խօսելու սովորութիւն ունէին. չէին ասում ցոեսութիւն, չէին պաչում միմեանց, այլ համբուրում էին միմեանց, այսինքն՝ իրարից հոտ էին առնում, ինչպէս բառն ինքը ցոյց է տալիս, համ-բուրել, որ կընշանակէ հոտ քաշել իրարից։ Բայց և այդ ժամանակն էս նրանք անխտիր գործ էին ածում օտար բառերը (թէ խօսակցութեան և թէ գրականութեան մէջ), որոնք մի ժամանակ մեր հայկաբանները թվում էին զուտ հայերէն և մեկնում էլ էին—կանդեղ, որ է՝ կայանդ-եղ, եկեղեցի — եկ-եղիցի, բազէ՝ որ է վազէ...

Հարկ չհամարելով հինգերորդ ոսկեդեհնիկ դարու մատենագրութիւնից անթիւ օտար բառերը մէջ բերելու, որովհետև վստահ եմ, որ ոչ ոք այդ մասին կասկած չունի, ես այսքան կասեմ միայն, որ եթէ մենք խորշելու լինինք օտար բառերից, թէ հնից և թէ նորից, և սկսենք մեր գրականութիւնից դուրս մղել բոլոր օտար բառերը, այնուհետև էլ այնքան բառ չի մնալ, որ կարողանանք «Լեզու» հանդէս հրատարակել։

Ծայրայեղ մաքրասիրութիւնը ծայրայեղ օտարամոլութեան չափ արհամարհելի է։ Մեզ առաջնորդ պէտք է ունենանք մեր առողջ դատողութիւնը, որ մեզ թելադրում է, թէ ինչ դէպքում ինչպէս պէտք է վարուիլ։ Պէտք չէ մժղուկները քամել և ուղտերը կուլ տալ։ «Լեզու» Հանդիսի լեզուն հայկական մաքուր բառերը ունենալով հանդերձ, բնաւ երբէք հայերէն չէ։ Լեզուն ամեն բանից առաջ պէտք է հոգի ունենայ, կենսունակ լինի, բայց որովհետև Մխիթարեանների տեսութեամբ լեզուն երբև մի գործաբանական մարմին չի նկատուում, մենք կընմանեցնենք լեզուն մի բազմաթել քնարի։ Եթէ չէք ընդունում, որ նա պէտք է հոգի ունենայ, ընդունեցէք գոնէ, որ նա պիտի քնարի թելերի ներդաշնակութիւնն ունենայ։ Լեզու Հանդիսի նոյն իսկ բանաստեղծական բաժնի մէջ ոչ միայն հոգի չկայ, այլ և ոչ իսկ ներդաշնակութիւն կայ։

Դ. ԱՂԱՅԵԱՆՑ

ՄԱՀԱՏՈՒՅԱԿ

ԿՈՍՏԱՆԴԻՆ Պ. ՄԵԼԻՔԵԱՆ

Մայիս ամսի 7—8-ի գիշերը Հայոց դպրոցը կորցրեց իր ժրաջան և անձնուէր մշակներից մէկը։ Գանձակ քաղաքը զրկուեցաւ իր այն արժանաւոր քաղաքացուց, որին ոչ ոք չէ կարող փոխարինել։ Այդ անժամանակ խաւարող աստղն էր Կոստանդին Պօղոսեան Մելիքեան, Գանձակու ազգային երկսեռ դպրոցների տեսուչը։ Կոստանդին Մելիքեան 38 տարեկան էր։ Նախ ուսել է Թիֆլիզի Գիմնազիոնում, ուր հասել է մինչև վեցերորդ դասարան և ապա գնալով Ռուսաստան ուսումնասիրել է գիւղատնտեսութիւն։ Զբկարողանալով յաջողեցնել իր մասնագիտութեամբ պարապել, Հանգուցեալը 1883 Թուականին յանձն է առնում Գանձակի երկսեռ դպրոցների տեսչութեան և ռուսաց լեզուի ուսուցչութեան պաշտօնները, որ վարձ և չարունակում է մինչև ներկայ տարին, մեայն այս վերջին երկու տարին ստանալով վարձատրութիւն։ Կոստանդին Մելիքեան այն հազուագիւտ առաքինի ոգիներից էր, որոնց նմանները Նախախնամութիւնը քիչ է տուել Հայոց ազգին։ Նա քրտնաջան մշակ էր, առաքինի մարդ էր և հայր. անձնազոհ անդամ էր հասարակութեան, անվոխարինելի. սերող ընկերը էր, նրա սիրտն ու հոգին ազնիւ էր և մաքուր, ինչպէս մի մանկան խղճ։ Նրան սիրում էին աշակերտները, ուսուցիչները, ժողովուրդ, հայեր և օտարները, ամենքն էլ սրտանց, ամենքն էլ անկեղծ. դրանով բացատրվում է այն սրտաճմլիկ սուգը, որ տիրապետում էր ամբողջ Գանձակում, մայիսի 9-ին։ Նրա Ճանապարհը ծաղիկներ էին փռել,—ով քաղցը և երանելի յիշատակ. ժողովուրդն իր սիրելի գաւակին Ճանապարհ է դնում դէպի սառն գերեզման և իր բոլոր ծաղիկները նրա Ճանապարհին փռում է. իսկ նոր ծաղիկները, Գանձակի մանուկ սերունդը, այդ անմեղ մանուկները իրանց արտասուքով ողողում են ծաղիկները, հեկեկանքով լցնում օդը...

ԽԱՌՆ ԼՈՒԲԵՐ

Անցեալ ապրիլի 30-ին Թիֆլիզի հայերը ծանեցին պ. Գէորգ Զմշկեանի Թատրոնական գործունէութեան XXV ամեակը: Հանդէսը փառաւոր էր: Յօբելեարին ուսուց և վերց Թատրոնական խմբերից, հայ զրագէտներից և երեսփոխանութիւնից տրուեցան շքեղ ընծաներ և կարգացին ուղերձներ: Թիֆլիզի հայ մամուլի «Մշակի», «Արձագանքի» և «Աղբիւրի» կողմից մի ուղերձ կարդաց պ. Տէր-Մարիսեան, այդ ուղերձը արտագրել էր մեր հայազն նկարիչ պ. Գ. Բաշինջաղեանը, որ ներփակուած էր կամարը ժամուրի կողմի մէջ ոսկի տառերով դրոշմուած՝ «Գէորգ Զմշկեանին (1862—1887) 30 ապրիլի 1887, Թիֆլիզի Հայոց մամուլը»:

—

«Աղբիւրի» նախորդ №-ում տպուած պ. Մինէան Փիւրքեանի առաջարկած հանեցուկը վճռել են Տրապիզոնում Յակոբեան Ձէնհիշեան և Ս. Երկեանն: Առաջի վճռողն պ. Փիւրքեանը նուիրել է իր կողմից մի զեղեցիկ պատկերագրական փքանոերէն գիրք: Իսկ Ց. Տ-Ց. առաջարկութիւնը վճռել է Նոր-Բայազէդից օր. Հոգինէ Շահխաթունեանց:

—

Ներկայ տարուայ «Աղբիւրի» մի օրինակ նուիրել է պ. Յ. Տէր-Յակոբեանը Կատարտ գիւղի ուսումնարանին, 1 օր. Եւ պ. Գրիգոր Ա. յարգեանը իր նորակառոյց Սարուշէն գիւղի ուսումնարանին: Ձիշեալ երիս պարոններն էլ գործակից են պանդխտութեան մէջ, բայց գործակից չեն մոռանում իրանց սիրուն հայրենիքը:

—

Աբուքիւն և Մանուէլի քաժանորդագին ուղարկած է մեզ Ազդաշից պ. Դ. Դուլբաբեանը 10 օրինակի համար 20 ր. Բագուից պ. Ս. Աբէլեանը 2 օր. համար 4 ր.:

Ղարաբաղի Թեմական վիրատեսուչ պ. Յովհաննէս Տէր-Գրիգորեան Ս. Էջմիածնում ձեռնադրուեցաւ վարդապետ՝ Վահան վերակոչմամբ: Նորընծայ Հայրսուրբից ամենայն պատեհաւնիք բաղդ ունեցանք առանձ նրա անդրանիկ և սուրբ պատարագի նշխարը: Հայրսուրբը ուղարկել է նշխարներ և այստեղ մի քանի յարդիւլ ազդայինների, որոնք խնդրում են մեզ երանց կողմից էս յայտնել խորին շնորհակալութիւն: Մենք ինծայոյս ենք, որ բարեկիրթ Վահան Հայր սուրբը իր անաչառ, ազնիւ բնաւորութեամբը և փոքրաոգութեամբը կարողանայ իր բարեկամներին առ ինքն ունեցած հաւատներն ու յոյսը:

—

Սարուշէն գիւղում (Ղարաբաղում), ուր գտանվում է Սարուշէնի հին ձեռագիրը աւետարանը և յայտնի ուխտատեղի է գարաբաղցիներէ համար, նորբերումն բացուելնուկ պ. Գրիգորը Այվազեանը կառուցել է մի շինութիւն ուսումնարանի համար և ինչպես լսում ենք, վարդապետին էլ ինքը գնալու է Թէ ուխտ և Թէ այցելութիւն իր կառուցած ուսումնարանին:

—

Շնորհակալութեամբ ստացանք Տէր-Սարգիս աւագ քահ. Աղաջանեանից՝ իր կազմած կրօնի դասագրքի ա, մասը. պ. Բ. Մկրտիչեանից՝ իր հրատարակած Հայոց առաջին Լուսաւորիչները ս.ս. Թադէոս և Բարդուղիմէոսի, «Արարատից» արտատպուած. պ. Պ. Ագաճեանից՝ Շէյքսպիր և իւր Համլէթ ողբերգութեան պրիւսի ու քննադատութիւնները, և «Բուռ Մանկ.» խմբ. Վիկտոր Հիւգոի Թշուառների դ. հատորը:

—

ՏԻԿԻՆ ԱՆՆԱ ԱՂԱՍԱՐԱՆԻՆ, «ԱՂԲԻՒՐԻ» № 4-ՈՒՄ ԲԵՒՈՒԱՅ ՎՃՌԱԼՈՒՆ ՀԱՄԱՐ, ԸՆԹԱՑ ՈՒՂԱՐԿՈՒԱԾ 25 ՐՈՒԲԼՈՒ ԳՐՔԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ.

		ր.	կ.
Ադայեանց Ղ.	Անահիտ	„	50
» »	Արեգնադան կամ կախարդական աշխարհ	„	40
Ակդէա.	Պատմական վէպ, թարգ. Գ. Ֆ. Ադանեանց	„	50
Ադամեան,	Շէքսպիր և նրա համլէթ ողբերգութեան ազբիւրն ու քննադատութիւնները	1	—
Աւետարիւս,	Հոկայ Մրջիւն, պատկերազարդ	„	40
» »	Ցրնտեօք գիւղացն » »	„	40
Անդերսէն,	Սոխակ և խոզաբած	„	20
Ատովմեանք, Ղևոնդեանք և Վարդանանք		„	05
Բժիշկ Բօկ	Դորձնական խրատներ երեխաների մտաւորական և ֆիզիքական կրթութեան համար թարգ. Ա. Աբասխանեանց	„	30
Գարֆիլդի կենսագրութիւնը (փայտաշէն խրճիթից մինչև սպիտակ տունը) պատկերազարդ		„	60
Գէորգ Ռօլէստօն		„	60
Դօդէ Ալֆօնս	Լրտես տղան և Մելիւզինի ընծան	„	15
Դիկէնս	Հարս և սկեսուր, կազմած	„	25
Դօն-Քիշօտ	Լամանչեցի	„	70
Էօժէն Սիւ	Թափառական հրէայ ա. և բ. հատոր պատկերազարդ	4	50
Ժան Բատիստ	Լիւլլի մանկութիւնը	„	10
Էէսսինգ	Նաթան իմաստուն, թարգ. Գ. Բարխուդարեանց	„	60
Լիսոլօս	Պօզանեանի ուսուցչի օրագրից	„	20
Հոմերի Իլիականը	թարգ. Փ. Վարդանեան	1	—
» Ոդիսականը	» » »	1	20
	Հայաստանի առաջին լուսաւորիչները	„	05
Հիւգօ,	Թշուառները ա. և բ. հատոր պատկերազարդ	2	—
Մելիք-Շահնազարեանց	Պ. Ղբլըցէ կնանոց Պընը-փէշակը	„	20
» »	Անմշակ և մշակուած ծառի կեանքը	„	30
Նազարեանց Ստեփանոս	Հոգեղէն կերակուր	„	60
Նաւասարդեանց	Հայ ժողովրդական հէքիաթները	„	30
Շմիդթ Քրիստափոր,	Երեք ըրոյց	„	20
» Ֆերդինանդ,	Բենիամին Ֆրանկլին թարգ. փ. Վարդանեան	„	40
» »	Գէորգ Վաշինգթօն » » »	„	60
Շիլէր,	Վիհելմ Տէլլ թարգ. Գ. Բարխուդարեանց	1	—
»	Օրլէանի կոյսը	„	60
»	Դօն-Կարլոս	1	—
Ոյդա	Հնդու Աքաղաղ	„	10
Չէստէրտոնի ժառանգը	թարգ. Գ. քահ. Ադանեանց	1	—
Պողոսեանց Պ.	Հացի խնդիր	„	80
» »	Շահէն	1	—
Պուշկին	Ոսկի ձկնիկ, թարգ. Ղ. Աղայեանց	„	30
Սարդարեան,	Զարմանքի Աբամի արկածները	„	40
Տէր-Աւետիքեան,	Քնար խօսնակ	„	50

«ԱՂԲԻՒՐԻ» ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՐԻՆ ԱԴՈՒԼԻՍ Տ. Ն. Ա. Ստացել ենք։

ԷՋՄԻԱԾԻՆ Հ. Շատ շնորհակալ ենք. կըտպագրուի առաջիկայ №-ում։ Հիանալի է, լսոնարհաբար կենգրում ենք չընդհատեք։

ՆՈՒԽԻ Գ. Գ. Այո, նոյն Թարգ. ուրիշից աւելի վաղ էր ստացուել։

ԵՐԵՒԱՆ Յ. Տ. Մ. Ստացել ենք, այո, բայց դրանք գրաքառ էին, իսկ մենք աշխարհաբար ենք կամենում։

Ն. ՆԱԽԻՋԵՒԱՆ Մ. Ս. Պատիերները ուղարկեցինք, իսկ «Աղբիւր» այն տարուայ Զեր ուզած №-ը սպառուած է։

ԲԱԳՈՒ Ա. Բ. ուղարկում ենք Զեզ կանոնաւոր. եթէ փոստի յրտոյը Զեզ միչտ ուշ է հասնում կամ №-ը կերտոտացրած, թերթերը պակասեցրած և պատռտոտած, այդ մասին կարող էք գանգատուել այդտեղի փոստային վարչութեան։ Հարկաւոր դէպքում Զեզ կարող ենք ուղարկել այստեղի փոստային վարչութեան մեզ տրուած ընկալագրի հաստատած պատճէնը, որով կարող էք ապացուցանել, որ բոլոր բաժանորդներին միանգամից է ուղարկվում և ոչ մաս մաս։

Յ. Պ. Բարեհաճեցէք, կենդրում ենք, յայտնել Զեր մանրամասն հասցէն. ովքեր են արդեօք, որ անկանոն կամ բոլորովին չեն ստանում, որպէս զի հետամուտ լինել կարողանանք։

ԷՋՄԻԱԾԻՆ Մ. Ա. Ինչո՞ւ լռեցէք. տպուելուն մի նայէք, պատճառները շատ են և ոչ մեզանից, ամեն դէպքում, կախուած։

ԲԱԳՈՒ Ա. Ս. Ստացանք և ուղարկեցինք, միայն Ձեր կողմից. ի՞նչու մեր կողմից էք կամենում։

ԺԼՆԵՒ Ա. Ն. Զեզ նամակ գրեցինք։

Կ. ՊՕԼԻՍ «Բուբ. համբ.» № 8 մի օրինակ պակաս է ուղարկուած. բարեհաճեցէք ուղարկել։

ՇՈՒՇԻ Ա. Բ. Դարձեալ չհաղորդեցէք։

ԱՍԽԱԲԱՏ Գ. Տ.-Դ. Թուցէ շուտով։ Բաժանորդագրութիւնը շարունակվում է. այժմ գժուար է տպագրութիւնն սկսել, քանի որ յայտնի չէ մօտաւորապէս անգամ, քանի բաժանորդ կունենայ։

ԲԱԳՈՒ Ա. Բ. Ուղարկվում է Զեր հաղորդած հասցէով։

ՄԻԼԱՆ Կ. Շ. Ստացել ենք և յանձնել։

ԱԽԱԼՑԽԱ Ա. Բ. Մինչև այսօր լոյս տեսածները ուղարկեցինք, ստանալուց հաղորդեցէք, այսուհետև մենք կուղարկենք։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Дозволено цензурою. Тифлисъ, 4 Іюля 1887 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2